

Յողաշինություն և հողօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2014 թվականի առաջին կիսամյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Գլաձոր և Չիվա համայնքներում կատարել ենք համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ բարձրարժեքից ցածրարժեքի:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 15 առաջարկություններ, որից 14-ի նպատակային նշանակությունը փոխվել է:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 7 համայնքներում:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը հունիսի 2014թ օտարվել է 21.4 հա, վարձակալության է տրամադրվել 2150.0հա կնքվել են 18 պայմանագիր:

Ամառային արոտները , որոնք ընդգրկվել են համայնքների վարչական սահմաններում՝ բաժնի կողմից հաճախակի այցեր են կազմակերպվել ուսումնասիրելու օգտագործվող արոտները և օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրերի օրինականությունը: Աշխատանքներ են ընթանում մարզի հողային հաշվեկշիռը կազմելու վերաբերյալ: